

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոր Կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու, լուսակառ եւ գերադիտակ, վսեմափառ եւ ամենապայծառ, սրովբէապար եւ քրովբէաճեմ, քրիստոսահիմն եւ լուսաւորչալէն եւ աստուածալջ սուրբ աթոռոյ իջմիածնի: Յորմէ ժամանեալ Հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բաղմապատրիկ օրհնութիւն ի վերայ տիրապահ եւ աստուածախնամ Տիգրանակերտու օրհնեալ քաղաքիդ հոգեւոր որդւոցս քահանայից եւ ժողովրդեանն, մանաւանդ Մաղաքիայ Զէլէպուն, Ադամ Զէլէպուն, Զորկլի Սօճա Կարապետին, Նալբանդ Կարապետին, երեսփոխան Սահակին, միւս երեսփոխան Սահակին, Մահտեսի Ղառաղալին, էթմէքէի Պետրոսին, Մահտեսի Սօճա Տօնապետին, Մահտեսի Տապաղ Սարգսին եւ այլ առ հասարակ սիրելի որդւոցս մեծի եւ փոքու ի Տէր Յիսուս խնդալ:

... Սիրելի՛ք, գրեալ էիք յաղաղս մեր գրելոյս առ Եղիազար Հոգեւոր Տէրն: Մեք ի սուրբ յերուսաղէմայ ընդ ծով եւ ընդ ցամաք բազում նեղութեամբ Կդ. օրն հասաք ի Ստամպոլ յաղաղս սիրոյ եւ խաղաղութեան, զի զԵղիազարն եւ զՄարտիրոսն սիրով Համոզեմ եւ առեալ զնամ ի սուրբն յերուսաղէմ: Մինչ իմ գալս Եղիազար Հոգեւոր Տէրն գնացեալ էր ի սուրբ յերուսաղէմ եւ Մարտիրոս Վրդպտն ի Ստամպոլ էր, եւ թէ զինչ անցուցին ընդ մեզ՝ Տէր մի համարի զայն